ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

3 նոյեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

156
(2822)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԸ՝ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐ ԱԹՈՌԸ

Երեկ հայտնի դարձավ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունը նիստ է արել, եւ քննարկել են հեռավոր Վարդենիս ու Ալավերդի համայնքների ավագանու ՔՊ խմբակցությունների աշխատանքների հետ կապված հարցեր: Պաշտոնապես տարածված այս տեղեկությունը խիստ մտահոգիչ էր, քանի որ բազմազբաղ վարչապետը որոշել է երկու քաղաքների ավագանիների հարցերով զբաղվել: Իրականում, ArmLur.am-ի տեղեկություններով, Ալավերդիում ՔՊ-ն փորձում է իմպիչմենթի գործընթաց սկսել Ալավերդու ընդդիմադիր համայնքապետ Արկադի Թամազյանին պաշտոնանկ անելու համար, քանի որ նա «Ապրելու երկիր» կուսակցությունից է: Նախաձեռնությունը պետք է կյանքի կոչի Ալավերդի համայնքի ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Դավիթ Ղումաշյանը: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, նա այս օրերին բանակցություններ է վարում նաեւ ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության անդամների հետ, փորձում է նրանց համոզել, որ միանան իր նախաձեռնությանը, բայց ապարդյուն: Ավելին՝ նույնիսկ որոշ ՔՊ-ականների համար է Դավիթ Ղումաշյանը անընդունելի, քանի որ Ալավերդիում նա այնքան էլ ընդունված կերպար չէ: Վերջինս հայտնի է նաեւ իր սկանդալային վարքագծով. բազմաթիվ են հրապարակումներն այն մասին, որ նա մի քանի անգամ ծեծկռտուքների մեջ է ընկել: Նկատենք, որ Դավիթ Ղումաշյանը հանդիսանում է Սուրեն Պապիկյանի հովանավորյալը, ում անունից էլ անպատիժ գործում է Ալավերդիում: Ինչ վերբերում է Վարդենիսին, ապա այնտեղ ավագանու ընդդիմադիր խմբակցությունը սեպտեմբերի 19-ից մեկնարկած հանրահավաքների ժամանակ իր աջակցությունն էր հայտնել Հանրապետության հրապարակում հավաքվածներին, որը մնացել է Նիկոլ Փաշինյանի կոկորդին: Նիկոլ Փաշինյանը որոշել է միանձնյա ՔՊ-ական իշխանություն հաստատել ողջ երկրում. չեզոքացնում է բոլոր ընդդիմադիր համայնքապետերին, ավագանիներին: Նա միակուսակցական երկիր է սարքում հեղափոխական ու ժողովրդավարական կեղծ արժեքների անվան տակ:

ՀՀ արդարադատության նախարարությունը «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի՝ ԱԱԾ մեկուսարանի պետ Արման Մելքոնյանի նկատմամբ կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն» է կիրառել: Պատճառը ՀՀ պաշտպանության նախկին նախարարի հետ կատարվածն է: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության արդեն նախկին պետ Սերգեյ Ատոմյանի հեռացումը առաջին հերթին կապված է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի հետ: Մասնավորապես, օգոստոսի 1-ին, երբ ԱԱԾ մեկուսարանից պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին տեղափոխել էին Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին, ճանապարհին Դավիթ Տոնոյանը խնդրել էր ուղեկցողներին, որ թույլ տան կարճ տեսակցել մորը, հետո շարունակել ճանապարհը դեպի Ազգային ժողով: Տոնոյանին ուղեկցող ծառայողները կապ էին հաստատել վերադասի հետ, որը թույլ էր տվել՝ Տոնոյանը գնա տուն ու տեսակցի մորը՝ պայմանով, որ ոչ ոք չիմանա: Այս հանդգնության համար ՔԿՀ ծառայության պետ Սերգեյ Ատոմյանը ազատվեց պաշտոնից, իսկ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանն էլ տեղեկացրեց, որ «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումից հետո նախարարության վերահսկողական վարչությունը դեպքի վերաբերյալ 07.08.2023 թվականին ծառայողական քննություն է սկսել: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես տեղեկացավ, որ ծառայողական լիազորությունները վերազանցելու համար Արդարադատության նախարարության «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Արման Մելքոնյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը: Հիշեցնենք, որ Արման Մելքոնյանը Աժ ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի որդին է, Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հովանավորյալը:

Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի տեղակալ Հարություն Գուլյանը յուղալի պաշտոններ սկսել է ստանալ 2018 թվականից հետո: Գուլյանը մինչ 2018 թվականը եղել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում որպես հսկիչ, «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ում՝ անվտանգության աշխատակից, իսկ դրանից առաջ՝ մի քանի ՍՊԸ-ներում խորհրդատու վաճառող, եւ այլն: 2018 թվականի շրջադարձերից հետո Երեւանում ծնված եւ մեծացած՝ Արագածոտնի մարզի ներկայիս փոխմարզպետը դարձավ այն ժամանակվա տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի օգնականը, տեղակալը: Համաձայնե՛ք՝ լավ աճ է Մոսկվայի Սերվիսի պետական համալսարանի համաշխարհային տնտեսագիտության ֆակուլտետում սովորող անձի համար: Նկատենք, որ երբ Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ էր Գուլյանը, 2019-2021 թվականներին Երեւանի տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական աստիճան է ստացել: Ջրային կոմիտեում իրեն չգտած փոխմարզպետը վերադարձել է Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ՝ որպես գլխավոր տնօրենի խորհրդական: Այդ պաշտոնին էլ երկար չի մնացել եւ 2020 թվականի հուլիսին նշանակվել է Արագածոտնի փոխմարզպետ: Թվում է՝ ամեն ինչ կարգին է, եւ սա սովորական անհատի կարիերայի աճ է՝ իր բացառիկ ունակությունների եւ տաղանդի շնորհիվ, բայց վաճառողից փոխմարզպետ դարձած Գուլյանը, որը գրեթե ամբողջ կյանքը ապրել է Երեւանում, հանկարծ փոխմարզպետ է դարձել մայրաքաղաքին մոտ մարզում: Ուշագրավն այն է, որ փոխմարզպետ Գուլյանը հայտարարագրել է 2 բնակարան, 2-ն էլ՝ Երեւանում:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***



Արտգործնախարար Արարատ Միրզոյանն այսօր կգնա խորհրդարան: Նա կմասնակցի 2024թ.-ի պետբյուջեի քննարկմանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Միրզոյանի մասնակցությամբ քննարկումը թեժ է լինելու: ՔՊ-ականները նախապես պատրաստվել են, թե ով ինչ հարցեր պետք է տա նախարարին: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս գրել է, որ 44-օրյա պատերազմից հետո Արարատ Միրզոյանի ու ՔՊ-ականների ջրերը մի առվով չեն գնում: Ամեն անգամ, երբ Արարատ Միրզոյանը գալիս է խորհրդարան, Աժ նախկին նախագահին շատ սառն են դիմավորում թիմակիցները: Արարատ Միրզոյանն էլ իր հերթին արդեն տեւական ժամանակ է՝ իր թիմակիցների հետ կապը կտրել է, չի շփվում նրանց հետ: ՔՊ-ականները նման վերաբերմունքով իրենց պատասխանն են տալիս Միրզոյանին:

ԶՐՈՒՅՑ

# ՓՈՍՏԱՆՋՅԱՆԸ ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԿԴՆԻ՞

**Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանը շաբաթներ առաջ մեզ հետ զրույցում հայտարարեց, որ դեռ որոշում չունի՝ կվերցնի ավագանու անդամի մանդատը, թե ոչ:**

«Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը հայտարարելու է մանդատը վայր դնելու մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով կրկին զրուցել է Զ. Փոստանջյանի հետ:

**-Տիկին Փոստանջյան, որոշ ժամանակ առաջ մեզ հետ զրույցում հայտարարել էիք, որ դեռ որոշում չունեք՝ մանդատը վերցնում եք, թե ոչ: Հիմա որոշում ունե՞ք այդ մասով:**

-Կարծում եմ՝ դա հիմա քաղաքական թիվ մեկ օրակարգը չէ: Ես որոշ ժամանակ առաջ ահազանգել էի, թե ինչ է կատարվում Երասխի, Ջերմուկի սահմաններին. ավելի լավ կլինի՝ լրատվամիջոցները դա նկարեն ու այդ հարցը բարձրացնեն:

**-Տիկին Փոստանջյան, սահմանային հարցերը եւս լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են մշտապես, բայց իմ հարցը Ձեր մանդատ վերցնել-չվերցնելուն է վերաբերում:**

-Դեռ չեմ որոշել, հիմա ինձ համար ավելի կարեւոր խնդիրներ կան: Մենք մինչ այս ավագանու նիստերը՝ քաղաքապետի ընտրության հարցով, փոխքաղաքապետի ընտրության հարցով բոյկոտել ենք:

**-Իսկ ավագանու՝ նոյեմբերի 21-ի նիստին մասնակցելո՞ւ եք:**

-Մինչեւ նոյեմբերի 21 դեռ ժամանակ կա, տեսնենք՝ երկրի վիճակը ինչ է լինում:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԿՐՔԵՐ

# ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**Օրերս իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը այս շաբաթ արդեն երրորդ անգամ վարչության նիստ է արել՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:**

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ քննարկվել են Ալավերդի եւ Վարդենիս համայնքների ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների աշխատանքների հետ կապված հարցերը:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ Ալավերդու եւ Վարդենիսի համայնքներում ավագանին հաճախ է ընդդիմադիր կեցվածք ցույց տալիս: Օրինակ՝ ընդամենը երկու ամիս առաջ՝ սեպտեմբերին, Վարդենիսի «Միասնական Վարդենիս» խմբակցությունը հայտարարեց, որ միանում է համազգային գործադուլին եւ պահանջում է ՀՀ կառավարության հրաժարականը:

«Մեր խմբակցությունը ոչ է ասում այս ապազգային կառավարությանը եւ պահանջում է այս կառավարության հրաժարականը: Արցախն ընկավ, ո՛չ, Արցախը հանձնեցին: Այսօր Արցախում օրհասական վիճակ է: Մեր ժողովրդի մի մասը կանգնած է ցեղասպանվելու վտանգի առաջ: Արցախի մի շարք գյուղերում թուրք հրոսակը մորթազերծ է արել ծերերին եւ մանուկներին, տղամարդկանց եւ կանանց: Այսօր Արցախի հայ մայրերը, բացի գերխնդրից, առավել դագաղի խնդիր են լուծում իրենց որդիների համար: Արցախի մեր հայրենակիցների՝ օգնություն աղերսող հայացքներն ուղղված են դեպի մայր Հայաստան, իսկ Հայաստանի Հանրապետության ապազգային կառավարությունը Արցախը համարում է Ադրբեջան եւ հրաժարվում է հային պաշտպանելու պարտականությունից: Բոլոր նրանք, ովքեր համարում են, որ հանձնելով Արցախը՝ կփրկեն Հայաստանը, ասեմ, որ հաջորդը լինելու է Վարդենիսը, Սյունիքը եւ հետո Երեւանը: Այն կառավարությունը, որը պարտավորություն չունի արցախցու հանդեպ, երբեք պարտավորություն չի ունենա վարդենիսցու, սյունեցու, երեւանցու նկատմամբ: Ավելի քան 10 միլիոն հայի պատիվն ու արժանապատվությունն պահողը 120 հազար արցախցին է»,- նման հայտարարություն էր տարածել «Միասնական Վարդենիս» խմբակցության նախագահ Դավիթ Շահնազարյանը:

Ալավերդի համայնքը ընդդիմադիր «Ապրելու երկիր» կուսակցության կուրացիայի տակ է գտնվում: 2022թ.-ի սեպտեմբերի 25-ի տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություններին ավագանու հավասար՝ 13 մանդատ էին ստացել «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) եւ «Ապրելու երկիր» կուսակցությունները՝ չհաղթահարելով 50 տոկոսի շեմը: «Ապրելու երկիր» կուսակցությունը կոալիցիա կազմեց ընդամենը մեկ մանդատ ստացած «Հայ ազգային կոնգրես» կուսակցության (ՀԱԿ) հետ, եւ ավագանին քաղաքապետ ընտրեց «Ապրելու երկրի» անդամ Արկադի Թամազյանին, իսկ փոխքաղաքապետ՝ ՀԱԿ-ի ներկայացուցչին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ահա սա է պատճառը, որ հենց Ալավերդին ու Վարդենիսն են հայտնվել Նիկոլ Փաշինյանի ուշադրության տակ, ու երեկվա վարչության նիստը նվիրված է եղել այս համայնքներում առկա քաղաքական իրավիճակը քննարկելուն: ՔՊ-ականները որոշել են ամեն գնով հսկել, որպեսզի այս համայնքներում ընդդիմադիրների դժգոհությունը նոր թափ չստանա ու իրենց վերահսկողությունից դուրս չգա:

## ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի մի խումբ բնակիչներ ահազանգել են «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն, թե ոչ մի կերպ չեն կարողանում կապ հաստատել սեփական համայնքի ղեկավար հանդիսացող Թովմաս Շահվերդյանի հետ: Պարզվում է՝ Շահվերդյանի ֆեյսբուքյան էջը թույլ է տալիս միայն հետեւել հրապարակումներին, հաղորդագրություն գրելու հնարավորությունը փակ է: Եթե բնակիչները որեւէ խնդիր կամ հարց ունեն, չեն կարող կապի դուրս գալ համայնքի ղեկավարի հետ, քանի որ Թովմաս Շահվերդյանի հեռախոսահամարը, սոցիալական էջերը, բոլոր հասանելի խողովակները վերջին աղմկահարույց դեպքերից հետո փակ են բոլորի առջեւ: Մնացել է փոստային առաքանու տարբերակը եւ այցը համայնքապետարան՝ Աստծո հույսով, որ կընդունի համայնքի ղեկավարը բնակչին եւ կլսի նրանց: Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր՝ հոկտեմբերի 20-ին կրակոցներ են հնչել Արագածոտնի մարզում՝ «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրից դեպի «Գալուստի ձոր» կոչվող հանգստյան գոտի ճանապարհին: Մի խումբ անձանց միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել: Մասնավորապես՝ կրակոցները եղել են հողի թեմայի շուրջ, եւ հաշիվներ պարզելուն ներկա են եղել համայնքի ղեկավարը եւ տեղակալը: Հավելենք, որ ներկա պահին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մեծ երկրպագու հանդիսացող Թովմաս Շահվերդյանը նախկինում եղել է Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ:

## ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 2-ին դիմել է Արարատի եւ Վայոց ձորի մարզի քաղաքացիական գործով դատարան եւ հայց է ներկայացրել՝ ընդդեմ ՍԴ աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանի:

Ավելի վաղ Էդգար Ղազարյանն իր հարցազրույցներից մեկում «ամենամեծ կոռուպցիոներ» էր անվանել Ալեն Սիմոնյանին:

Ալեն Սիմոնյանը դիմել է դատարան՝ պարտավորեցնելու Էդգար Ղազարյանին հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները, ինչպես նաեւ որպես փոխհատուցում գումար է պահանջել Էդգար Ղազարյանից:

Դատարանը հոկտեմբերի 23-ին, դատավոր Գեւորգ Բալյանի որոշմամբ, վարույթ է ընդունել Ալեն Սիմոնյանի հայցադիմումը:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է



Գերմանիան աշխատում է Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատման, քաղաքական եւ տնտեսական դիվերսիֆիկացիայի, ինչպես նաեւ ԵՄ-ի հետ սերտ եւ լավ հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Ինչպես տեղեկացրել է APA-ն, այս մասին ասել է Բաքվում Գերմանայի դեսպանության մամուլի քարտուղար Մարսել Վյետորը:

«Դրա համար տարածաշրջանում շատ կարեւոր են վստահությունը եւ հաշտեցումը: Նպատակը հանապարփակ խաղաղությունն է բանակցությունների միջոցով, որպեսզի ադրբեջանցիները եւ հայերը կարողանան ապրել խաղաղ եւ անվտանգ իրենց ազգային սահմաններում: Այդ նպատակով մենք աջակցում ենք եռակողմ բանակցությունների վերականգնմանը Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ եւ աջակցում ենք ցանկացած հարաբերության, որը կնպաստի խաղաղությանը եւ կայունությանը Հարավային Կովկասի ժողովուրդների համար»,- ասել է դեսպանության ներկայացուցիչը տարածաշրջան Գերմանիայի արտաքին գործերի նախարար Աննալենա Բերբոքի այցի նախօրեին:

## ԶԱԽԱՐՈՎԱՆ ՄԵԿՆԱԲԱՆԵՑ

«Մենք դիտարկում ենք որպես պաշտոնական Երեւանի ցուցադրական հակառուսական ժեստ»,-ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի մասնակցությունը Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու խաղաղության բանաձեւի վերաբերյալ երրորդ միջազգային կոնֆերանսին:

Ընդ որում՝ Զախարովան հերթական անգամ հիշեցրել է ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի՝ Կիեւ այցի եւ Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահ Ռուսլան Ստեֆանչուկի հետ Դուբլինում Հայաստանի խորհրդարանի նախագահ Ալեն Սիմոնյանի հանդիպման մասին. «Ինքը՝ Փաշինյանը, հանդիպել է Ստեֆանչուկի հետ Գրանադայում: Երեւանում պետք է իրենց հաշիվ տան, որ խոսքը ցուցադրական խաղեր տալու մասին է նրանց հետ, ովքեր ագրեսիվ կերպով դիմակայում են մեր երկրին: Եվ այստեղ այլ սահմանում չկա: Եվ ափսոսանք է առաջացնում այն, որ հանրապետության ներկա ղեկավարությունը նպատակաուղղված, համառորեն քանդում է մեր դաշնակցային հարաբերությունները, որոնք ոչ այնքան վաղուց ինքն էլ անվանել է Հայաստանի կայունության եւ բարգավաճման կարեւորագույն գործոն»:

## ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

# ԳՐԱՆԱԴԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ՈՒ ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԸ

**Գրանադայի հանդիպմանը Ալիեւի չգալն իհարկե դրական ազդակ չէ, եւ Եվրոպայի կողմից ընդունված բանաձեւերը նաեւ միտված էին, որ որոշակի ճնշում գործադրեն: Այս մասին նոյեմբերի 2-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը:**

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նրա խոսքով՝ միջազգային հանդիպումներում Հայաստանը բարձրաձայնում է մի քանի սկզբունքներ, որոնցից ամենակարեւորը տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչումն է. «Գիտեք, որ մենք թվերով արձանագրել ենք այդ տարածքները, որպեսզի տարատեսակ մեկնաբանությունների առիթ չտա, թե ինչ ենք հասկանում տարածքային ամբողջականություն ասելով: Սեղանի շուրջ խոսակցությունների ընթացքում այդ ընկալումը կա: Խոսքը այդ ընկալման դե յուրե ամրագրումն է եւ որոշակի փաստաթղթի ստորագրումը՝ այս սկզբունքները հաշվի առնելով»,-ասաց Արշակյանը:

Դիտարկմանը, որ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ երեք գլխավոր սկզբունքները համաձայնեցված են, այդ դեպքում ինչու հանդիպումներ չեն լինում, Հակոբ Արշակյանն արձագանքեց. «Այդ հայտարարությունները հիմնված են Շառլ Միշելի մասնակցությամբ քննարկումների վրա, որին հետեւել է Շառլ Միշելի հայտարարությունը: Այլ բան, որ, դե յուրե ֆիքսելու հետ կապված, ես ենթադրում եմ, որ որոշակի ընթացակարգային եւ այլ պատճառներ կան, որոնց մասին չեմ ցանկանում մանրամասնել»:

Հարցին, թե Հայաստանն ունի արդյոք ԽՍՀՄ ռազմական քարտեզները, որոնց հիման վրա պետք է իրականացվի դելիմիտացիայի գործընթացը, քանի որ խոսվում է, որ դրանք Ռուսաստանի մոտ կան միայն, ԱԺ փոխխոսնակը պատասխանեց. «Բնօրինակն, իհարկե, մեկ հատ է, չեն կարող բոլորն ունենալ բնօրինակ, բայց այդ քարտեզները կան, եւ Հայաստանն ունի դրանց ծանոթանալու հնարավորությունը: Այդ քարտեզներին հասանելիություն ունեն թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը»:

Անդրադառնալով Հռոմի ստատուտի վավերացմանը հաջորդող գործընթացներին՝ Արշակյանն ասաց, որ Հռոմի ստատուտի վավերացման ֆոնին Հայաստանը դիվանագիտական խողովակներով Ռուսաստանին առաջարկել է երկկողմ միջպետական համաձայնագիր ստորագրել, որը կբացառի միջազգային դատարանի որոշումների կիրառումը երկու երկրներին վերաբերող հարցերում:

«Այսինքն՝ իրավական առումով մենք կարող ենք ունենալ երկկողմ համաձայնագիր, որը բացառում է միջազգային դատարանի որոշումների կիրառումը երկու երկրներին վերաբերող հարցերում:

Մենք դա առաջարկել ենք, արձագանք չենք ստացել, բայց դեռ ժամանակ կա մինչեւ ուժի մեջ մտնելը, եւ հույս ունեմ, որ պրոգրես կլինի», - ասաց Արշակյանը՝ տեղեկացնելով, որ, օրինակ, Վաշինգտոնի հետ Երեւանը նման համաձայնագիր ստորագրել է:

Հարցին, թե այդ դեպքում ինչու է Մոսկվան առարկում եւ սվիններով ընդունում Հայաստանի կողմից Հռոմի ստատուտի վավերացման փաստը, Արշակյանն արձագանքեց, որ ինքն էլ կցանկանար այդ հարցի պատասխանը ստանալ ռուսական կողմից:

## ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԵՄ–Ի ՊԱՐԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում Եվրամիության առաքելությունը հայտարարում է լիարժեք գործունեություն սկսելու մասին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի ներկայությամբ Եղեգնաձորում կենտրոնակայանի բացումից հետո: Այդ մասին ասված է առաքելության X-ի էջում:

«Փետրվարից՝ ԵՄ առաքելության մեկնարկից ի վեր, Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին իրականացվել է ավելի քան 1000 պարեկություն»,- նշված է գրառման մեջ:

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ մայրաքաղաքում հասարակական տրանսպորտի շարժակազմերի հոսքերի հաճախականության անընդհատությունն ապահովելու նպատակով նոյեմբերի 3-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Հերացի փողոցում:

Առաջին երթեւեկելի գոտիով կթույլատրվի երթեւեկել միայն հասարակական տրանսպորտին:

Միաժամանակ նշված ճանապարհահատվածում կիրականացվեն համապատասխան գծանշման եւ ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքներ:

## ԳԵՐԵՎԱՐԵԼ ԵՆ

Ադրբեջանում հայտարարել են Մադաթ Բաբայանի գերեվարման մասին:

Ինչպես տեղեկացրել է APA-ն՝հղում կատարելով Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությանը (ՊԱԾ), Բաբայանն, իբր, գերեվարվել է Քարվաճառի (Քելբաջարի) շրջանում «ահաբեկչական գործողությունների կատարման կասկածանքով, ազգային թշնամանք հրահրելու մտադրությամբ»: Մաթադ Առաքելի Բաբայանին վերագրվում է նաեւ մասնակցություն «անօրինական զինված կազմավորումներին»:

Բաքվում հասցրել են Բաբայանին մեղադրել «Խոջալուի 1992թ. փետրվարի 26-ի ցեղասպանությանը մասնակցելու» համար:

Թե երբ է գերի վերցվել Բաբայանը, ՊԱԾ-ն չի տեղեկացնում:

## ԶՈՀԵՐ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

Գազայի հատվածում՝ փախստականների ճամբարի վրա հարձակման հետեւանքով զոհվել է առնվազն 195 մարդ:

Այս մասին հաղորդում է Al Jazeera հեռուստաալիքը, տեղեկությունը տարածել են «ՀԱՄԱՍ»-ի ներկայացուցիչները:

Գազայի հատվածի հյուսիսում գտնվող Ջաբալիա փախստականների ճամբարի վրա իսրայելական բանակի հարձակման հետեւանքով մոտ 120 մարդ մնացել է փլատակների տակ, իսկ 777 մարդ վիրավորվել է:

Հիշեցնենք, որ նախօրեին Իսրայելի պաշտպանության ուժերը ավիահարվածներ էին հասցրել «ՀԱՄԱՍ»-ի վերահսկողության տակ գտնվող մի շարք օբյեկտների: Իսրայելական բանակը հաստատել է Ջաբալիայի վրա հարձակման մասին տեղեկությունը:

## ԻՐԱՎԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

# ԱՐՓԻ ԴԱՎՈՅԱՆԸ ԿԳՆԱ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

**Ո՞ւր է նայում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, երբ իր բթի տակ ՔՊ-ականները բրեական գործընթացների մեջ են:**

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը մեզ փոխանցել էր իր վրդովմունքը, թե «Ժողովուրդ» օրաթերթը նյութ է հրապարակել, որ ինքը տուն է գնել ու միաժամանակ ԱԺ-ից տան վարձավճար է ստացել:

«Սուտ. հերյուրանքներ եք գրել: Ես եւ Արփին (նկատի ուներ Արփի Դավոյանին) երբ բնակարան ենք գնել, այլեւս տան վարձավճար չենք ստացել...»,- ամենայն պատասխանատվությամբ հայտարարել էր պատգամավորը:

Կրկին ուսումնասիրեցինք փաստաթղթերը, ՀՀ Ազգային ժողով ուղարկած մեր հարցման պատասխանները եւ պարզեցինք, որ Լիլիթ Ստեփանյանը 2019 թվականից մինչեւ 2022 թվականը ամեն ամիս տան վարձավճարի փոխհատուցում է ստացել: Այսինքն՝ նա 2020-ի ապրիլի 1-ին տուն է գնել, բայց եւ 2020-ին, եւ 2021-ին նաեւ տան վարձի գումար է ստացել պետբյուջեից:

Իսկ Արփի Դավոյանի դեպքում իրավիճակն ավելի դրամատիկ է. նա 2019 թվականից մինչեւ 2023 թվականը՝ հիմա, տան վարձավճարի փոխհատուցում է ստանում ՀՀ Ազգային ժողովի բյուջեից: Այսինքն՝ 2021 թվականին եւ տուն է գնել, եւ տան վարձավճար է ստանում:

Ստացվում է, որ պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը ստում է, երբ ասում էր, թե ինքն ու Արփին տուն գնելուց հետո վարձավճարի փոխհատուցում չեն ստացել: Ստացել են:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ կան պաշտոնական փաստաթղթեր, որոնք ստացել ենք ՀՀ Ազգային ժողովի լրատվական վարչությունից: Սա դեռ վերջը չէ. «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանը, որն աչքի է ընկնում ուժային կառույցների ղեկավարների նկատմամբ հատուկ ուշադրությամբ, իրականում իր լուրջ պատճառներն ունի:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ քննչական կոմիտե հետեւյալ բովանդակությամբ.

«Հարգելի՛ պարոն Քյարամյան, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ ունի առ այն, որ 2018 թվականին ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում քննվել է մի գործ, որով անցել է Արփի Դավոյանը: Նախնական տեղեկություններով՝ նա ՍՊԸ-ներ է հիմնադրել, ինչ-որ ներկրումներ արել, ապա խաբել պետությանը: Նա 2018 թվականի ապրիլից հետո ՊԵԿ քննչականում անգամ հարցաքննվել է: Հաշվի առնելով այդ իրողությունը, համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկացնել.

1. Ի՞նչ գործ է եղել հարուցված, որով անցել է Արփի Դավոյանը:

2. Ի՞նչ կարգավիճակ է նա ունեցել քրեական գործով:

3. Եթե քրեական գործ հարուցված չի եղել, ի՞նչ քննություն է տարվել:

4. Ի՞նչ փաստական հանգամանքներ են պարզվել Արփի Դավոյանի գործունեության մասով»:

ՀՀ քննչական կոմիտեից, ի պատասխան մեր գրության, ստացել ենք աղքատիկ տեղեկություններ.

«ՀՀ ՊԵԿ քննչական վարույթում քննված քրեական վարույթով Արփինե Դավոյանը հարցաքննվել է որպես վկա: Նկատի ունենալով, որ ներկայումս շարունակվում է հիշյալ քաղաքական վարույթի նախաքննությունը՝ ուստի հարցման մեջ բարձրացված մյուս հարցերի պատասխանները հրապարակման ենթակա չեն, քանի որ հանդիսանում են նախաքննական գաղտնիք»:

Այսպիսով, Արփի Դավոյանը, որ օրուգիշեր ԱԺ ամբիոնից բարոյախրատական դասեր է տալիս ընդդիմախոսներին, քրեական գործով վկա է անցնում: Իսկ արդյոք պատրաստվո՞ւմ է գնալ ու ինքնախոստովանական ցուցմունք տալ Գլխավոր դատախազությունում:

## ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆ

### ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթը առաջինն էր, որ գրել էր «Ջատիկ» երեխաների աջակցման կենտրոնում ուշագրավ դեպքի մասին:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից տեղեկացնում են, որ ավարտվել է «Ջատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի պահնորդի (պահակի) կողմից հիշյալ կենտրոնի անչափահաս սաների հասցեին սպանության սպառնալիք հնչեցնելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում իրականացված քննությամբ հիմնավորվել է, որ նշված ՊՈԱԿ-ում անվտանգության ծառայություններ մատուցող ՍՊ ընկերության 56-ամյա աշխատակից պահնորդը կենտրոնի անչափահաս սաների նկատմամբ հնչեցրել է սպառնալիքներ:

Մասնավորապես, 56-ամյա տղամարդը, 2023 թվականի ապրիլի 30-ին՝ իր հերթապահության ընթացքում, «Ջատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի 13, 14 եւ 15 տարեկան սաներից պահանջելով հանգիստ մնալ, խմբի համար նախատեսված սենյակին կից բաց պատշգամբում նրանց հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ՝ օդում թափահարելով իր մոտ պահվող դանակը:

Սպառնալիքն իրականացնելու իրական վտանգից վախենալով՝ երեխաները դիմել են փախուստի:

Պահնորդը նույնպիսի վարքագիծ դրսեւորել է նաեւ մի քանի օր անց: Մասնավորապես, կենտրոնի տարածքից դուրս գալու պատճառով 56-ամյա անձը կենտրոնի բակային տարածքում հիշյալ 3 անչափահաս սաներից կրկին պահանջել է խելոք մնալ եւ, իր մոտ պահվող դանակը ցուցադրաբար թափահարելով օդում, նրանց հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ: Երեխաները վախենալով դիմել են փախուստի, սակայն տղամարդը վազել է նրանց հետեւից՝ միաժամանակ գետնից վերցնելով փայտանման իր ու նետել նրանց ուղղությամբ:

Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա՝ «Ջատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում որպես պահնորդ աշխատող անձին մեղադրանք է ներկայացվել՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ):

Նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատավարական հսկողություն իրականացնող դատախազին այն հաստատելու եւ դատարան ուղարկելու նպատակով: 56-ամյա անձը նշված երկրորդ դեպքից հետո ազատվել է աշխատանքից»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԻՆՉՊԻ

# ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՄԱՐՆԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

**ՀՀ ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանի ամուսինը՝ Արշակ Վարդապետյանը, որը ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդականն է, օպերատիվ համարանիշներով է շրջում:**

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Արշակ Վարդապետյանը ԲԴԽ-ում միակ խորհրդականն է, որն ունի ավտոմեքենայի օպերատիվ համարանիշներ, եւ հարց է առաջանում՝ ինչպես են այդ համարանիշները հայտնվել Կարեն Անդրեասյանի խորհրդականի մոտ:

Պարզվում է՝ հայրենի դատական համակարգի անկախության թիվ մեկ երաշխավոր կառույցի անդամների համար դեռ ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը դիմել է ոստիկանություն եւ 10 հատ օպերատիվ համարանիշներ խնդրել:

Բնականաբար, ոստիկանությունը բավարարել է Գագիկ Ջհանգիրյանի խնդրանքը եւ ԲԴԽ-ի 10 անդամներին հատկացրել օպերատիվ համարանիշներ: Ու քանի որ ԲԴԽ անդամների փոփոխությունները հաճախ են լինում վերջին տարիներին, ԲԴԽ որոշ անդամների օպերատիվ համարանիշները փոխանցվել են նորեկներին՝ բացառությամբ մեկի:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ԲԴԽ նորընտիր նախագահ Կարեն Անդրեասյանը որոշել է, որ ԲԴԽ դատավոր անդամ Արշակ Վարդանյանը, որը «իր սրտի պաշտոնյան» չէ, չի կարող օպերատիվ համարանիշներ ունենալ:

Ըստ ամենայնի, հենց նրան «հասանելիք» օպերատիվ համարանիշն է Կարեն Անդրեասյանը տվել իր խորհրդական Արշակ Վարդապետյանին: Իսկ ի՞նչ նպատակ է դա հետապնդում: Դատական համակարգում լուրեր կան, որ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդական Արշակ Վարդապետյանը օպերատիվ համարանիշներով հաճախ է լինում տարբեր դատարաններում, հանդիպում դատարանների նախագահների հետ՝ նրանց փոխանցելով Կարեն Անդրեասյանի մեսիջները, թե որ գործով ինչ վճիռ կամ որոշում է անհրաժեշտ քաղաքական իշխանությանը:

Այս տեղեկությունը փորձեցինք պարզել անձամբ Արշակ Վարդապետյանից՝ հետաքրքրվելով, թե երբ է ստացել օպերատիվ համարները, եւ արդյոք դատարանների նախագահների մոտ գնալու առաքելության համար է ստացել համարանիշները:

**-Որտեղի՞ց Ձեզ այս տեղեկությունը:**

-Ես իմ աղբյուրներն ունեմ, որոնք չեմ պատրաստվում բացահայտել, պարզապես Ձեզնից ցանկանում եմ ճշտել:

-Ես էլ շատ տեղեկություններ, ասեկոսեներ կամ, ինչպես Դուք եք սիրում ասել, օդում կախված լուրեր եմ ստանում, որ լրագրողները գումարի դիմաց պատվերներ են անում, բայց դա ես չեմ բարձրաձայնում:

**-Իմ մասին նման բան Դուք լսե՞լ եք: Եթե իմ մասին նման բան կլսեք, գործընթաց սկսե՞ք:**

-Ընդհանրապես եմ ասում:

**-Բայց իմ հարցն ու Ձեր պատասխանն ի՞նչ կապ ունեն իրար հետ:**

-Այնքանով կապ ունեն, որ եթե իմ այս տեղեկությունը բամբասանքի մակարդակի խոսակցություններ են, ապա նույն կարգի բամբասանք է նաեւ Ձեր նշածը: Դրա համար նաեւ Ձեզ եմ խնդրում եւ հորդորում զերծ մնալ բամբասանքներից:

**-Այսինքն՝ Դուք օպերատիվ համարներով չե՞ք շրջում:**

-Կարծում եմ՝ ես արդեն բավարարող պատասխան տվեցի:

*Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 62 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԲՐԻԳԱԴ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացնում է «Կանժինստրոյ» ընկերությունը: Դովեղի դպրոցի շինարարության աշխողեկ, Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Սերյոժա Ամիրաղյանից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ շինարարությունում աշխատում է Իրանի քաղաքացիների բրիգադ՝ թվով 9 հոգի, որոնք շինարարական տարբեր աշխատանքներ են կատարում: Դպրոցի շինարարության մեջ աշխատող տեղացի բանվորները նրանց հետ հիմնականում ժեստերի լեզվով են շփվում: Պարսիկները բնակվում են վարձակալած տանը, որի վարձը դպրոցի շինարարությունն իրականացնող կազմակերպությունն է հոգում: 2023թ. ապրիլի 29-ին Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզ կատարած այցի շրջանակներում այցելել է Դովեղի դպրոցի շինհրապարակ, բանվորներին հորդորել է ետ չմնալ շինարարության ժամանակացույցից, հավաստիացրել է, որ դպրոցի շինարարության ֆինանսավորման գործում խնդիրներ չեն առաջանա: Դովեղի դպրոցի շինարարության ֆինանսական հիմնական խնդիրն այն է, որ դպրոցի շինարարության տարածքը ոչ թե 3-րդ կարգի, փափուկ գրանտ է, ինչպես նշված է դպրոցի շինարարության նախագծում, այլ 5-րդ կարգի, ժայտոտ գրունտ, որը քանդելու համար շինարարական տեխնիկա է աշխատել, մեծ ծավալի գործ է կատարվել, որի համար պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում: Քաղաքաշինության կոմիտեն դպրոցի հիմքի ժայռոտ գրունտում կատարված աշխատանքների մասին հայտնել է կառավարություն, որպեսզի դպրոցի շինարարությունն իրականացնող ընկերությանը լրացուցիչ ֆինանսավորում կատարվի: Կառավարության նոյեմբերի 1-ի նիստում պետք է քննարկվեր ու լուծում տրվեր այդ խնդրին:

## ՄԱՐԶԻ ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով՝ որպես ՔՊ կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահ խնդրում եմ հայտնել՝ որքան է ՔՊ կուսակցության անդամների թիվը, նրանցից քանիսն են Տավուշի մարզի բնակիչ: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Քանի որ ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահ, այլ ոչ խորհրդի անդամ, առաջարկում եմ համապատասխան հարցով դիմել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությանը»: Նախկինում Հայկ Ղալումյանը մարզպետարանի կայքում տեղադրված իր կենսագրության մեջ չէր նշել, որ ինքը ՔՊ կուսակցության անդամ է, սակայն վերջերս այդ մասին նշումն ավելացրել է կենսագրության մեջ:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

**Կառավարությունը նոյեմբերի 2-ի նիստում հավանություն տվեց «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում փոփոխությունների նախագծին եւ այն անհետաձգելի համարեց:**

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման հարաբերությունները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է սահմանել իրավական հիմք, որպեսզի հնարավոր լինի ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը եւ կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն, ինչպես քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման լիազորությունը վերապահել Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանը:

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քաղաքացի ճանաչվելու հնարավորության ժամկետը երկարաձգել մինչեւ 2026թ.-ը, քանի որ պրակտիկան ցույց է տալիս, որ ՀՀ-ում դեռեւս բնակվում են ազգությամբ հայեր կամ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիներ, որոնք չունեն որեւէ երկրի քաղաքացիություն եւ դիմում են Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն՝ ՀՀ քաղաքացի ճանաչվելու եւ անձը հաստատող փաստաթուղթ ստանալու համար:

Սույն դրույթն ապահովում է նաեւ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 30.08.1961թ. կոնվենցիայի պահանջների պատշաճ կատարումը, որի շրջանակներում վերը նշված անձինք հնարավորություն են ստանում ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ այդպիսով բացառելով քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ձեռք բերումը:

Բացի այդ, հաճախակի են լինում դեպքերը, երբ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո օտարերկրյա քաղաքացիները չեն օրինականացնում իրենց հետագա բնակությունը Հայաստանում կամ դիմում են օրինականացման համար տեւական ժամանակ անց, ինչի հետեւանքով վերջիններիս գտնվելը ՀՀ-ում համարվում է անօրինական եւ առաջ է բերում վարչական պատասխանատվության ենթարկելու խնդիր:

Հաշվի առնելով, որ օրենսդրությամբ հստակ ժամկետներ սահմանված չեն ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո օտարերկրյա քաղաքացիների՝ ՀՀ-ում բնակությունն օրինականացնելու համար, անհրաժեշտություն է առաջացել նախատեսել ողջամիտ ժամկետ՝նշված անձանց՝ ՀՀ-ում բնակությունն օրինականցնելու կամ ՀՀ տարածքից դուրս գալու համար:

Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով արցախահայերին, նշեց. «Արդեն իսկ բավականին մեծ հոսք կա, ԼՂ-ից բռնի տեղահանված մեր քույրերը եւ եղբայրները դիմում են ՀՀ քաղաքացիություն ստանալու հարցով: Մեր քաղաքականությունն այն է, որ եթե ԼՂ-ից տեղահանվածները օբյեկտիվ հնարավորություն չեն ունենալու վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, մեր ցանկությունն այն է, որ նրանք բոլորը մնան Հայաստանում, ապրեն ու աշխատեն այստեղ:

Իհարկե, այդ գործընթացը, բնականաբար, մենք սպասում էինք, որ պետք է տեղի ունենա: Մեր խնդիրն այն է, որ հնարավորինս արագ այդ գործընթացը կազմակերպենք:

Իհարկե, կան օրենսդրական որոշ նրբություններ, որոնք պետք է պահպանվեն, այստեղ նաեւ մեզ բոլորիս՝ Կառավարությանը եւ պետական մարմիններին, պետք է հնարավորինս արագ աշխատել, բայց նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանված մեր քույրերից եւ եղբայրներից որոշակի համբերություն ենք ակնկալում, որպեսզի ամեն ինչ ճիշտ, օրինական ընթացակարգերով առաջ շարժվենք, որպեսզի արագության պատճառով իրավական խնդիրներ չառաջացնենք: Այդ պրոցեսը կգնա բնականոն:

Նաեւ շնորհակալ եմ, որ մարդիկ ըմբռնումով են մոտենում, որ ճշգրիտ պետք է լինի ամեն ինչ իրավական տեսակետից: Համոզված եմ, որ այդպես էլ կլինի»,- ասաց վարչապետը:

Փաշինյանը նաեւ տեղեկացրեց, որ առաջիկայում Հումանիտար կենտրոնի աշխատանքների շրջանակներում սպասվում է նաեւ 50+50 ծրագրի իրագործումը:

«Հետագայում արդեն նաեւ քաղաքացիություն եւ կարգավիճակ ստանալու բերումով պետք է մտածենք՝կենսաթոշակառուների թոշակների վճարման ինչ համակարգ ենք ներդնում, ինչ սկզբունքներ պետք է գործեն»,- ասաց վարչապետը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

## ԳՐԻՊԻ ՆՈՐ ՀԱՐՈՒՅԻՉ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

**Հեմֆային համաճարակաբանական դիտարկման շրջանակներում լաբորատոր հետազոտության արդյունքում Հայաստանում հայտնաբերվել է գրիպի Բ տեսակի հարուցիչ:**

«Ժողովուրդ» օրաթերթն այս մասին տեղեկանում է Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի ֆեյսբուքյան էջից: Աղբյուրը պարզաբանել է, որ գրիպի ընդհանուր ախտանշաններն են ջերմությունը, մարմնի ջարդվածության զգացումը, դողը, սարսուռը եւ քրտնարտադրությունը, գլխացավը, չոր հազը, շնչարգելությունը, հոգնածությունը եւ թուլությունը, քթահոսությունը (հարբուխ), կոկորդի ցավը եւ քերոցի զգացումը, ինչպես նաեւ ակնագնդերի ցավը, լուսավախությունը եւ արցունքահոսությունը, փսխումը եւ փորլուծությունը, որն ավելի տարածված է երեխաների մոտ: Բարդություններն են երկրորդային վարակները, ինչպիսիք են երկրորդային թոքաբորբը, բրոնխիտը, բկաբորբը, սինուսիտը, լարինգիտը, ականջաբորբը: Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը հայտնում է, որ գրիպի վիրուսով պայմանավորված՝ առաջնային բարդություններից հատկապես վտանգավոր են առաջնային թոքաբորբը, վիրուսային միոկարդիտները, մենինգիտը, էնցեֆալիտը, մենինգոէնցեֆալիտը, միելիտը, երիկամային անբավարարությունը եւ այլն: Հղիների մոտ, որպես կյանքին սպառնացող ամենավտանգավոր գրիպի բարդություն, կարող է զարգանալ սուր շնչառական անբավարարություն: Սուր շնչառական վարակներով եւ գրիպով չհիվանդանալու, ինչպես նաեւ բարդություններից խուսափելու նպատակով Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը կրկին հիշեցնում եւ հորդորում է.

- պատվաստվել սեզոնային գրիպի դեմ՝ դիմելով պոլիկլինիկա/ամբուլատորիա, ներկայում հանրապետությունում առկա գրիպի պատվաստանյութը պաշտպանում է գրիպի երկու Ա եւ երկու Բ ենթատեսակներից,
- խուսափել սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով հիվանդների հետ շփումից,
- հիվանդներին՝ մնալ տանը, հատկապես՝ սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով երեխաներին չթույլատրել հաճախել դպրոց եւ մանկապարտեզ՝ ապահովելով բժշկի կողմից խորհրդատվությունը եւ բուժումը,
- հրավիրել տեղամասային մանկաբույժին, թերապեւտին կամ ընտանեկան բժշկին եւ չզբաղվել ինքնաբուժմամբ,
- չօգտագործել հակաբիոտիկներ, քանի որ դրանք ցուցված չեն գրիպի եւ սուր շնչառական վարակների բուժման համար,
- հագնվել եղանակին համահունչ,
- պահպանել հազի եւ փռշտալու վարվելակարգը,
- օգտագործել հնարավորինս շատ հեղուկներ,
- հաճախակի օդափոխել փակ տարածքները,
- հետեւել անձնական հիգիենային:

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 5 ՃՏՊ. 5 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team

## ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԲԱՇԽՎԵՑԻՆ

Team Telecom Armenia-ի բաժնետոմսերի տեղաբաշխումն առաջնային հրապարակային առաջարկի միջոցով հաջողությամբ ավարտվեց. շուրջ 1000 ներդրող դարձավ Team-ի բաժնետեր:

Ընկերությունն ամբողջությամբ տեղաբաշխել է 8 միլիարդ 240 միլիոն դրամ արժողությամբ 40 միլիոն բաժնետոմս, որոնք Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակվելուց հետո կլինեն ազատ շրջանառության մեջ, ֆիզիկական եւ իրավաբանական անձինք հնարավորություն կունենան գնել կամ վաճառել դրանք:

«Մեր թիմը հաջողությամբ իրականացրեց մտածողություն փոխող եւս մեկ նախագիծ: Հայաստանում տելեկոմ ոլորտի զարգացումը մեր առաջնահերթությունն է, եւ ուրախ եմ, որ դրան ուղղված բոլոր ռազմավարական ծրագրերի իրագործմանն այսուհետ կմասնակցեն նաեւ մեր նոր բաժնետերերը»,-նշում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացրել է «Ամերիաբանկ»-ը:

«Ամերիաբանկ»ի տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանն ընդգծում է. «Արժեթղթերի շուկայում լինելով ակտիվ դերակատար՝ մենք մշտապես նպաստել ենք ոլորտի զարգացմանը եւ չէինք կարող անմասն մնալ նման պատմական իրադարձությունից: Team-ի եւ «Ամերիաբանկ»-ի արդյունավետ համագործակցության արդյունքում իրականացվել է բաժնետոմսերի բարեհաջող տեղաբաշխում, ու ձեւավորվել է ներդրողների դիվերսիֆիկացված կազմ, ինչը կարեւոր նախադրյալ է երկրորդային ակտիվ շուկա ունենալու համար»:

Ընկերության բաժնետերեր են դարձել հարյուրավոր ֆիզիկական ու իրավաբանական անձինք, էական ծավալի ներդրումներ են իրականացրել ինստիտուցիոնալ ներդրողները: Վերջիններից է «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը, որն իր առաջին ուղղակի ներդրումն է կատարել հայաստանյան բաժնետոմսերում: Այս գործարքի շնորհիվ ֆոնդի մոտ 400 հազար շահառու անուղղակի կերպով դարձել է Team Telecom Armenia-ի բաժնետեր:

Ներգրավված միջոցները Team Telecom Armenia-ն ուղղելու է Հայաստանի ողջ տարածքում օպտիկամանրաթելային NGN ցանցի ընդլայնմանը, 5G բջջային ցանցի կառուցմանը եւ միջազգային նոր կապուղիների ակտիվացմանը: Աշխատելով թվային տեխնոլոգիաների ոլորտում՝ ընկերությունը նաեւ մեծ ուշադրություն է դարձնելու ժամանակակից թվային գործիքների ու լուծումների ներդրմանը եւ այլ հավակնոտ ծրագրերի իրականացմանը:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ, 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը որակյալ ինտերնետով կապահովի Հայաստանի բոլոր մարզերը:

Հասարակայնության հետ կապերի ծառայություն՝ pr@telecomarmenia.am:

ՍՈՒԲՎԵՆՑԻԱ

# ԾՐԱԳՐԵՐԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԵՆ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

**Կառավարության չզեկուցվող հարցերի ցանկում ընդունվել է սուբվենցիոն ծրագրերի լավարկման եւս մեկ որոշում: Այս մասին նոյեմբերի 2-ին ՀՀ կառավարության նիստում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ խնդրեց ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանին ներկայացնել այն:**

Սանոսյանը նշեց. «Մեկում հետեւյալ ձեւակերպումն ենք տվել. մինչեւ 100 մլն բյուջե ունեցող եւ ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում Կառավարությունը առկա գործակիցներին լրացուցիչ 15 տոկոս կավելացնի: Եվս 2 ուղղությամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքների առումով աշխատանք ենք անում՝ մեկը՝ դոտացիաների հետ կապված փոփոխություններ ենք արել, որի արդյունքում իրենց տրվող գումարները կավելանան, հիմա նախագիծն ԱԺ-ում է, ինչպես նաեւ առանձին ծրագրեր ենք անում ամբողջովին պետբյուջեից:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կքննարկենք այն համայնքների հայտերը, որոնք նախորդ տարվա հարկերը, տուրքերը եւ այլ վճարները հավաքագրել են 90 եւ ավելի տոկոսով: Այսինքն՝ մենք խրախուսում ենք, որ համայնքները պատշաճ հավաքագրում իրականացնեն:

Բայց հաշվի առնելով, որ կարող են լինել դեպքեր՝ինչ-ինչ պատճառներով որոշակի խնդիրներ լինեն, բայց համայնքում կարեւոր ծրագիր լինի, տեղ ենք թողել, որ փոխվարչապետի գլխավորությամբ միջգերատեսչական հանձնաժողովը կարող է դիտարկել այդ ծրագրերը:

Մյուս կարեւոր փոփոխությունով մանկապարտեզներ, մշակույթի տներ կառուցելիս ծրագրի մեջ պետք է նշվեն հետագա դրա պահպանման ծախսերը, հետագա ընթացքը նույնպես պետք է ծրագրում ապահովվի:

Մյուս կարեւոր հարցը, որ փորձել ենք կարգավորել մանկապարտեզների եւ այլ շենք-շինությունների պարագայում գույքի մասն է, որպեսզի փաթեթի մեջ լինի գույքը, ընդհանուր դիզայնը:

Մյուս կարգավորումը վերաբերում է ոռոգման եւ խմելու ջրի համակարգերին. փորձել ենք մեծացնել Կառավարության մասնաբաժինը՝ դարձնելով 65-75 տոկոս, որպեսզի խրախուսենք՝ մեր համայնքները ոռոգման եւ խմելու ջրի համակարգերին շատ դիմեն:

Մյուս փոփոխությունը վերաբերում է մայթերի սալարկումներին. փորձում ենք խրախուսել, որ բնական քարով սալարկումներն ավելի շատ լինեն, քան բետոնե սալիկներով: Եթե բնական քարերով իրականացնեն, Կառավարությունը կվճարի 55-75 տոկոս, իսկ եթե, այնուամենայնիվ, համայնքը կորոշի, որ բետոնե սալիկներով, ապա՝25-45 տոկոս:

Վերջին փոփոխությունը. հաշվի առնելով, որ մեքենաների սարքավորումների ձեռք բերման մեջ համայնքները շատ կարիք ունեն աղբահանման մեքենաների եւ աղբամանների, այստեղ նույնպես մեր մասնաբաժինը մեծացնում ենք 55-65 տոկոս»:

«Մենք որոշել ենք սուբվենցիոն ծրագրերը որոշելիս ներգրավել նաեւ քաղաքացիներին: Ծրագրային որոշակի շրջանակներում քաղաքացիները կարող են էլեկտրոնային հարթակների միջոցով առաջարկել, որ եկեք հաջորդ տարի մեր քաղաքում իրականացնենք այսինչ ծրագիրը:

Եթե քաղաքացիները այդ ծրագրին հավանություն են տալիս, այդ դեպքում կառավարությունն առնվազն 80 տոկոս ֆինանսավորում է քաղաքացիների կողմից որոշված ծրագիրը: Սա չի նշանակում, որ հին համակարգը էլի չկա: Պարզապես մենք նոր բաղադրիչ ենք մտցնում, եւ քաղաքացիները հնարավորություն են ունենում իրենց նախագծերն առաջ մղել: Այստեղ կարեւորն այն է, որ ունենանք առցանց պատշաճ հարթակներ, որպեսզի վստահելի պրոցեսներ տեղի ունենան:

Մենք մեր միջազգային գործընկերների աջակցությամբ 4 համայնքում ունենք հավաստիացում, որ այդպիսի վստահելի առցանց հարթակներ ունենք՝ Աշտարակ, Աբովյան, Արմավիր, Ջերմուկ: Սա փորձնական ծրագիր է, եւ 2024-ի բյուջեի շրջանակներում միջոցները նախատեսել ենք: Այնպես որ, այդ համայնքների բնակիչներն արդեն կարող են մտածել նախաձեռնությունների մասին»,- հայտարարեց Փաշինյանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ՝ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ

**Հայաստանի կառավարությունը քննարկել է «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում կատարելու եւ Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի համապատասխան որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու ու ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու հարցը:**

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ ներկայացված նախագծի վերաբերյալ զեկուցելով՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը մանրամասնել է, որ այն նպատակ ունի ժամանակավոր բնակվելու եւ կոմունալ ծախսերի համար սոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում հատկացնել եւս 950 միլիոն դրամ հոկտեմբեր ամսվա վճարումների շարունակականությունն ապահովելու նպատակով:

«Այս նախագծով հատկացնում ենք նաեւ 420 մլն դրամ 100 հազար դրամ միանվագ սոցիալական աջակցության ծրագրին մշակված ու նույնականացված տվյալների վճարումներն իրականացնելու համար:

Նշեմ, որ 40+10 հազար դրամ աջակցության ծրագրից այս պահի դրությամբ արդեն իսկ օգտվել է 73 հազար 196 անձ: Նրանցից 69 հազար 199-ը ստացել է 40+10 հազար դրամ, իսկ 3997-ը՝ միայն 10-հազարական դրամ աջակցություն»,- ասել է նախարարը՝ հավելելով, որ հատկացվող գումարը հնարավորություն կտա շարունակել հոկտեմբեր ամսվա վճարումները եւ գումար տրամադրել 19 հազար անձի:

Նրա խոսքով՝ արդյունքում այս հատկացումն իրականացնելուց հետո 40 եւ 10 հազար դրամ աջակցությունը կտրամադրվի ավելի քան 92 հազար շահառուի, իսկ 100 հազար դրամ աջակցության ծրագրի հատկացումը թույլ կտա իրականացնել շուրջ 4200 անձի համար վճարումները, որոնց գերակշիռ մասն անչափահասներ են: Ընդհանուր առմամբ, նախագծով առաջարկվում է այս ծրագրերի համար հատկացնել 1 միլիարդ 370 մլն դրամ:

Ի պատասխան վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցին, թե ինչի հետ են կապված 100 հազար դրամ միանվագ աջակցության վճարումների ուշացումները, նախարարը պարզաբանել է, որ դիմումների մուտքագրման ընթացքում տարբեր խնդիրներ են առաջացել, մասնավորապես՝ դրանց սխալ լրացնելու կամ բանկային հաշիվների նույնականացման հետ կապված: Բացի այդ, վճարումները շաբաթական կտրվածքով հաստատելուց առաջ կրկին ստուգվել են, թե շահառուներից քանիսն են գտնվում ՀՀ-ում, որպեսզի ավելի հասցեական ու արդյունավետ տրամադրվի աջակցությունը:

*● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆ ՈՒ ԱՍՏՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Օրեր առաջ դերասան, երգիչ Ռաֆ Հարությունյանը Tert.am Life-ի հետ զրույցում խոսել է իր եւ դերասանուհի Իրինա Այվազյանի հետ ունեցած հարաբերությունների մասին: Վերջերս դերասանուհի Իրինա Այվազյանը հրավիրված էր LIFEROOM-ի տաղավար եւ Ամալյա Հովհաննիսյանի հետ ունեցած զրույցի ժամանակ նշել էր, որ ինքը եւ Ռաֆ Հարությունյանը բաժանվել են, եւ իրենց բաժանման պատճառը եղել է այն, որ իր կողակիցը խնդրել է, որպեսզի արտաքինի հետ կապված որոշակի փոփոխությունների դիմի, ինչից դերասանուհին բավականին վիրավորված էր: Մեկնաբանելով դերասանուհու ասածը՝ Ռաֆ Հարությունյանը նշել է. «Հարաբերություններում կա փուլ, երբ մարդիկ պետք է փորձեն ճանաչել իրար, ու մեզ մոտ դա կոչվում է ընկերություն անել: Երբ Իրինան հարցազրույցներից մեկի ժամանակ ասաց, որ ընկերություն ենք անում, դեռ նոր էր այդ ամենը, եւ ճանաչման փուլն էր մեզ մոտ: Երբ ճանաչել ենք միմյանց, հասկացել ենք, որ երկուսս էլ լավն ենք, բայց ոչ իրար համար»:**

«Ես դա իր համար եմ ասել, որ մի փոքր իրեն հետեւի, ավելի ուշադիր լինի իր արտաքինին. եթե ես էլ այն չհավանեմ, հետո՝ մեկ ուրիշի հետ հարաբերություններ ունենալու ժամանակ, ավելի հեշտ կլինի»,- ասաց Ռաֆը եւ հավելեց, որ չի սիրում, երբ իր անձնական կյանքի մասին խոսում են:

Ռաֆ Հարությունյանի կարծիքը չեն կիսում ոչ միայն իր եւ Իրինա Այվազյանի երկրպագուները, այլ նաեւ մի շարք հայտնիներ: Ի պատասխան Ռաֆ Հարությունյանի տեսակետի՝ հաղորդավար Միեր Բաղդասարյանը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում անդրադարձել էր՝ ասելով, որ Իրինան բավականին գեղեցիկ աղջիկ է. «Սիրելի՛ հետեւորդներ, ուղարկում եմ ձեզ դիտելու Tert.am Life-ի հարցազրույցը, որտեղ մի սկսնակ, կիսահայտնի, անմեղսունակ արտիստ հարցազրույց է տալիս իր մասին եւ անդրադառնում է մի շարք հարցերի: Այդ հարցազրույցը ավելի մեծ անդունդի մեջ գցեց այս երիտասարդին, քանի որ հարցազրույցի ժամանակ բոդիշեյմինգի եւ բուլլինգի է ենթարկում իր նախկին ընկերուհուն, որը, կարծում եմ, իրեն հարգող յուրաքանչյուր տղամարդ չէր անի: Այդ հարցազրույցից հետո ատելության ու հեյթի մեծ ալիք է սկսել՝ իր անձի հետ կապված, չեմ ուզում այդ ալիքին էլ ինչ-որ բան ավելացնել: Իսկ Իրինա Այվազյանի հետ կապված՝ ասեմ, որ բավականին երիտասարդ ու հաջողակ աղջիկ է, եւ թույլ մի՛ տվեք, Իրինա ջա՛ն, որ այսուհետ որեւէ մեկը Ձեզ բոդիշեյմինգի կամ բուլլինգի ենթարկի»:

Հաղորդավար Միեր Բաղդասարյանը վերջում հավելել է, որ դերասանուհին առհասարակ ոչ ոքի թույլ չպետք է տա իր կառուցվածքի հետ կապված քննադատություններ անել, քանի որ ինքը բավականին գեղեցիկ է:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՍՊՈՐՏ

## ՃԱՆԱՉՎԵՑ ԱՆՄԵՂ

Ծանրորդ Սիմոն Մարտիրոսյանը վրաերթի գործով ճանաչվեց անմեղ:

Փաստաբան Ռուբեն Բալոյանը մանրամասնել է. «Երկու տարվա համառ, անկոտրում, լարված պայքարի արդյունքում աշխարհի բազմակի չեմպիոն Սիմոն Մարտիրոսյանը, Հայաստանի Հանրապետության քր. օր-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, մահվան ելքով վրաերթ կատարելու մեջ ճանաչվեց անմեղ...

Շնորհավորում եմ, Սիմո՛ն ջան, հայ ազգի փառք ու պարծա՛նք»:

Հիշեցնենք, որ 2021 թվականի ապրիլին ծանրամարտի աշխարհի չեմպիոն, օլիմպիական խաղերի փոխչեմպիոն Սիմոն Մարտիրոսյանին մեղադրանք էր առաջադրվել՝ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի երկրորդ մասով (ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

## ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆԸ ՀԱՂԹԵՑ

Մեն կղզում անցկացվող FIDE Grand Swiss մրցաշարի 7-րդ տուրում Հայաստանի ներկայացուցիչ Սամվել Տեր-Սահակյանը սպիտակ ֆիգուրներով պարտության է մատնել Իսպանիան ներկայացնող Ալեքսեյ Շիրովին եւ 4,5 միավորով բաժանում է 13-24-րդ տեղերը: 4,5-ական միավոր ունեն նաեւ Լեւոն Արոնյանն (ԱՄՆ) ու Սամուել Սեւյանը (ԱՄՆ):

7-րդ տուրում Արոնյանը սեւ խաղաքարերով հաղթել է հնդիկ Ս.Լ. Նարայանանին: Սեւյանը սեւերով պարտության է մատնել ադրբեջանցի Այդին Սուլեյմանլիին:

4 միավոր է վաստակել Մանուել Պետրոսյանը, 3,5-ական միավոր՝ Հրանտ Մելքումյանը, Շանթ Սարգսյանն ու Գաբրիել Սարգսյանը, 3-ական միավոր՝ Հայկ Մարտիրոսյանն ու Վարուժան Հակոբյանը (ԱՄՆ):

Միանձնյա առաջատարն է հնդիկ Գուջրատի Վիդիտը՝ 5,5 միավոր:

Մրցաշարում կանցկացվի 11 տուր:

## ԿՄԻԱՆԱ ՄԵՍԻԻՆ

Բրազիլական «Գրեմիոյի» 36-ամյա ուրուգվայցի հարձակվող Լուիս Սուարեսը հունվարին կտեղափոխվի ամերիկյան «Ինտեր Մայամի»՝ վերամիավորվելով «Բարսելոնայում» նախկին թիմակիցներ, արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսիին, իսպանացի կիսապաշտպան Սերխիո Բուսկետսին եւ իսպանացի պաշտպան Ժորդի Ալբային. հաղորդում է El Pais-ը:

Լուիս Սուարեսն արդեն ունեցել է նախնական բանակցություններ: «Ինտեր Մայամին» նրան առաջարկել է մեկ տարվա պայմանագիր:

Դեկտեմբերին կավարտվի Լուիս Սուարեսի պայմանագիրը «Գրեմիոյի» հետ, եւ նա ազատ գործակալի կարգավիճակում անվճար կմիանա «Ինտեր Մայամիին»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ ⇨

Մրայա Քերիի All I Want for Christmas is You կուլտային հիթը աշխարհի շատ երկրներում ավանդաբար նշում է տոնական սեզոնի սկիզբը: Հայտնի փոփ դիվայի մրցակիցը կրկին ցանկանում է խաթարել սուրբծննդյան շունչը՝ հերթական դատական հայցը ներկայացնելով երգչուհու դեմ: Այս անգամ Քերիի դեմ հայտ ներկայացրած Էնդի Սթոունը 20 միլիոն դոլարի փոխհատուցում է պահանջում՝ պնդելով, որ երգչուհին կրկնօրինակել է իր՝ 1993 թվականի երգերից մեկը, որն այժմ, Քերիի շնորհիվ, սուրբծննդյան հիթ է դարձել:

Սթոունը հայտնի է Վինս Վան եւ Վալիանտ բեմական անուններով: Քերիի եւ երգի համահեղինակ Վալտեր Աֆանասեւի, ինչպես նաեւ Sony Music Entertainment-ի դեմ քաղաքացիական հայցում Սթոունը նրանց մեղադրում է «հեղինակային իրավունքի խախտման եւ անարդար հարստացման» համար:

Սթոունի փաստաբաններն ասում են, որ երգը ստեղծվել է 1989 թ.-ին, ռադիոեթեր է հեռարձակվել 1993թ.-ին, իսկ հաջորդ տարի հիթ է դարձել Billboard Hot Country Singles & Tracks հիթ-շքերթում, մոտավորապես՝ նույն ժամանակ, երբ հայտնվել է Քերիի տոնական երգը:

Հայցում նշվում է, որ Քերին կրկնօրինակել է Սթոունի՝ 1989 թ.-ի «կոմպոզիցիայի կառուցվածքը»:

Երգի թողարկումից ի վեր Քերիի տարբերակը ամեն տարի հեռարձակվում է ռադիոկայաններով: Երգը նաեւ գլխավորել է Billboard Hot 100-ը եւ գրանցել է ավելի քան 10 միլիոն օրինակի վաճառք՝ կոչվելով ադամանդյա, ինչով էլ դարձել է այսպիսի նվաճման հասած միակ սուրբծննդյան երգը:

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ Է ՍՏԱՑԵԼ

50 Cent-ի In Da Club երգը թողարկումից 20 տարի անց RIAA-ի կողմից պաշտոնապես ադամանդի կարգավիճակ է ստացել:

Մինչ օրս Get Rich Or Die Tryin ալբոմն ԱՄՆ-ում վաճառվել է առնվազն 10 միլիոն օրինակով եւ գրանցել ավելի քան 1,2 միլիարդ լսում Spotify-ում եւ 1,8 միլիարդ դիտում՝ YouTube-ում: In Da Club-ը 50 Cent-ի առաջին երգն է, որը հասել է ադամանդի կարգավիճակի: Թրեքի պրոդյուսերներն են Dr. Dre-ն եւ Մայք Էլիզոնդոն: 2002թ.-ին Billboard Hot 100 տարեվերջյան աղյուսակում այն զբաղեցրել է առաջին տեղը: Երգն ունի Գրեմմիի 50 անվանակարգեր, այդ թվում՝ «Լավագույն նոր կատարող», «Լավագույն ռեփ ալբոմ», «Լավագույն ռեփ դուետ կամ խումբ», «Տղամարդու լավագույն ռեփ սոլո կատարում» եւ «Լավագույն ռեփ երգ»:

*● Նոյեմբերի 4-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Հաղթանակի գենեզիս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

## ԱՐԺՈՒՅԹ

**ՀԱՐՑ. Ինչո՞վ են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:**

*Սմբատ Վերդյան (34 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող են փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

*ՀՀ Կենտրոնական բանկ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

## ՊԱՀԱՆՋՆԵՐ

**ՀԱՐՑ. Ո՞րն է քաղաքացիական ծառայող դառնալու համար անհրաժեշտ կրթության չափանիշը:**

*Արտակ Տոնոյան (32 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, իսկ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթություն՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար, որոնց համար առնվազն միջնակարգ կրթություն է պահանջվում:

***ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Առանձին դեպքերում մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար պաշտոնի անձնագրով կարող է սահմանվել բարձրագույն (մասնագիտական) կրթություն ունենալու պահանջ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Ակտիվիստ Արթուր Չախոյանն իր ֆեյսբուքյան էջում լուսանկար է հրապարակել, որտեղ երեւում է, որ ճանապարհի վրա stop բառը սխալ է գրած: Լուսանկարին կից Չախոյանն ավելացրել է. «Տիգրան Ավինյան, ըստ ծավալների զեկուցում եմ ձեզ, որ SOTP չէ, STOP է»:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:


## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*

*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| Մարզ | Ջերմաստիճան |
|---|---|
| Շիրակ | +3 +8<br>+12 +16 |
| Կոտայքի լեռներ | +4 +8<br>+12 +16 |
| Կոտայքի նախալեռներ | +9 +11<br>+16 +20 |
| Գեղարքունիք | +3 +7<br>+8 +13 |
| Լոռի | +8 +13<br>+18 +23 |
| Տավուշ | +10 +15<br>+20 +25 |
| Արագածոտնի լեռներ | +3 +6<br>+9 +13 |
| Արագածոտնի նախալեռներ | +7 +10<br>+18 +21 |

| Մարզ | Ջերմաստիճան |
|---|---|
| Արարատ | +9 +12<br>+22 +24 |
| Արմավիր | +8 +10<br>+21 +23 |
| Վայոց ձորի լեռներ | +4 +6<br>+12 +15 |
| Վայոց ձորի նախալեռներ | +8 +11<br>+21 +23 |
| Սյունիքի հովիտներ | +14 +18<br>+21 +25 |
| Սյունիքի նախալեռներ | +7 +12<br>+17 +21 |
| ԼՂՀ | +9 +12<br>+23 +25 |
| Երեւան | +9 +11<br>+22 +24 |


Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում



Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*